

Ամբաս Բիւրոս
Խմբագրութիւն «Փիիկնիկ», Ի
Աղեֆսանդրիա



S. Bural
Rédaction «PUNIG»
Alexandrie

ԵԳԻՊՏՈՍ

ԱՐՏԱՍԱՅՄԱՆ

Ղրգ.
ՏԱՐԵԿԱՆ... 45
ՎԵՏԱՄՍԵԱՅ 25

Տր.
ՏԱՐԵԿԱՆ... 15
ՎԵՏԱՄՍԵԱՅ 8

ԲԱԺՆԵԳԻՆԸ
ԿԱՆՆԻԿ Է
Ձեռագիր ետջ'դար-
ձուիր

Փ Ի Ի Կ Ն Ի Կ

Կը ծախուի ՄԷՎ Ղրուս ողջի

ԿՈՎՎԱՍ
ՏՆԵԿԱՆ Բայլ. 6
Ազդեր կ'ընդուն-
ուին մասնաւոր
պայմաններով.

Շ Ա Ք Ա Ք Ա Ք Ե Ր Ք


ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Գ. ՏԱՐԻ

4 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1902

Թիիկ 14

ՏԻԳՐԱՆ ԵՐԿԱԹ ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ



Աղեֆսանդրիոյ երիտասարդու-
թիւնը — որուն մէկ մասը, կարծեց-
եալ զարգացածներէն, իր բոլոր ու-
ժովք փարած է զուարճութեան ու ժա-
մանցի դաւանանքին — առնել մ'ի վեր
սփոփարար գործունէութիւն մը կը
պարզէ մեր ազգային յաւաքիմու-
թեան ա'յնքան կարևոր ու կենսական
գործին մէջ: Քանի մ'ամիս կայ, անոնց
մէջ կը տեսնուի ազնիւ եռանդ մը,
ձգտում մը դէպ ի ինչ որ կը դիւրա-
ցնէ ու կը հանրացնէ ժողովուրդին
մտաւորական ու բարոյական զարգա-
ցումը, հիմնուած՝ առողջ սկզբունք-
ներու վրայ:

Քաղքիս հասարակութեան համար
գաղտնիք մը չէ, մէկէ աւելի անգամ-
ներ յուզուեցաւ Հնչակեաններու Ու-
սումնաստրահն ու Աղեֆ. ժողովրդային
Մատենադարան-Լսարանը միացնելու
հարցը, որ սակայն, յստիս բախուե-
ցաւ դժուարութեանց ու մնաց միշտ
հարց: Կուղանք այս անգամ աւետել

թէ՛ այդ հարցը լուծուեցաւ վեր-
ջապէս հասարակութեան բազմանքին
ու շահերուն համապատասխան եղանա-
կով մը: Տարիներու ընթացքին մէջ
յոզնած, թուլցած այդ երկու մահա-
մերձ հաստատութեանց վերջին ժամը
չը հնչած, վրայ հասաւ «Տիգրան Եր-
կաթ» Միութիւնը, այս տարի Մայիսին
կազմուած ու բազկացած քաղքիս
թարմ ուժերէն, որոնց նպատակն է
զարկ աւել ժողովրդային շարժման,
հաւատարմորէն հետևելով ճամբան,
զոր տարիներ առաջ դժած է վաղա-
մեռիկ Հայրենասէրը: Այդ թարմ ու-
ժերը յաջողեցան, շատ մը բարձրագո-
տներու մէջէ, իրագործել այդ ժողո-
վրդային հաստատութեանց միացումը,
բերելով խառնելով իրե'նց ալ ուժը.
ու այսօր կ'ունենանք նոր հաստատու-
թիւն մը, «Տիգրան Երկաթ ժողովրդ-
դային Միութիւն»ը:

Թէ ո՞րքան անհրաժեշտ է կան-
գուն ու ամուր պահել այս զուտ ժո-
ղովրդային հիմնարկութիւնը, անվի-
ճելի ճշմարտութիւն մըն է: Ունենալ
կեդրոնավայր մը, հաւաքուիլ հոն,

Թերթ ու գիրք կարդալ, մտաւորա-
կան անունդ առնել, շփուիլ իրարու
գաղափարով ու զգացումով, կարծիք-
ներ փոխանակել ազգը շահագրգռող
հարցերու վրայ, վիճաբանիլ, քայլ
առ քայլ հետեիլ քաղաքակրթութեան
խաղաղիկ խաղացքին ու յալթանակ-
ներուն. գիշերները, փոխանակ գարե-
ջրատան, սրճարանի կամ ուրիշ տան
մը մէջ սպաննելու թանկագին ժամա-
նակը, փոխանակ ոգելից գոլորշիին,
սիկարին ու նարկիշի ծուխին ու մը-
խին մէջ թաւալոկելու, փոխանակ
նարսի, օմիլեօյի կամ ճաւրակի վրայ
կախուած թաղուած մնալու, առտուը-
նէ իրիկուն ու իրիկունէ առտուն
Թղթախաղի կանաչ սեղանին փարած՝
յիմար յոյսերով, մաշող սպասումնե-
րով ու շանթահարիչ պատրանքներով
փոխանակ կեանքին խաղքութիւնը
քաշկատելու. մէկ խօսքով, փոխանակ
ցեղին ընտիր յատկութիւնները փճա-
ցընելու և ամբողջ երիտասարդութիւն
մը դահավէժ նետել ձգելու ընկերա-
յին ճահիճը, ապրիլ կենսատու մթնո-
լորտի մը մէջ, գիշերային դասընթացք-
ներով առաջ տանիլ հանրային դաս-
տիարակութեան ու կրթութեան ամե-
նարևոր դորժը. ահա՛ Միութեան նպա-
տակը:

Ու այս նպատակին մեծութիւնը
կը շեշտուի մանաւանդ, երբ աչքի
առջև բերենք տեղիս հասարակութեան
ողորմելի մտաւորական վիճակը, որ,
գժբաղդաբար, մէկէ աւելի պարագա-
ներու մէջ, կը ցցուի մեր դէմ:

Թղթատաշական վարչութիւնը ան-
զիս Ազգ. Առաջնորդարանին կը յանձ-
նէ ամեն նամակ որ դրկուած է ան-
ժանօթ հայու մը հասցէին. ու այդ
նամակը չը յանձնուիր տիրոջը, մինչև
որ անոր ինքնութիւնը չը հաստատուի
Ազգ. Իրանատան կողմէն: Արդ, Ի-
ւանատունը ներկայացող այդ կարգի
ազգայիններէն ՅՕ ՕՂՕը գրել կարգալ

չ'են գիտե՛ր... լոկ խաչ նշանով մը
կ'ուզեն քալեցնել իրենց կառքը: Ու
ըստ թէ՛ Աղեքսանդրիոյ հասարակու-
թիւնը կը յառաջդիմէ, հիանալի կեր-
պով կը շահագրգռուի տեղական, ազ-
գային հարցերով, կը մասնակցի շար-
ժումներու, ևն. պատրա՛նք ու ինքնա-
խաբէութի՛ւն:

Մեր հասարակութեան անկարելի
տգիտութիւնը գիտենք թէ ո՛րքան
սուղի նստած է մեզի. գիտենք թէ
մեր բարոյական, մտաւորական, ֆի-
զիքական ու տնտեսական դժբաղդու-
թիւնները կը պարտինք մե՛ր իսկ տգի-
տութեան. հետևաբար, եթէ կ'ուզենք
օգտուիլ միջալայրին ընծայած դիւրու-
թիւններէն ու առաւելութիւններէն,
պէտք է մեր բոլոր ուժն ու ամբողջ
ուշը նուիրենք մեր հասարակութեան
մտաւորական մակարդակը բարձրա-
ցընելու ընթերցարանով, լսարանով,
ու մամուլով. շնա՛նք ինկած բար-
քերն ազնուացնելու գեղարուեստին
ու թատրոնին սէրն արծարծելով մեր
մէջ: Այս դերազանցօրէն միջազգային
երկրին մէջ խօսքի ու գործի ազա-
տութիւնը լիուրի կը վայելենք. սի-
րե՛նք ուրեմն այն վայրերը, ուր կը
կազմուի ու կը զարգանայ ազատու-
թեան գաղափարը:

ԷՄԻ, 20ԼԱ. իրապաշտ վե-
պերուն հեղինակն ու բնապաշտ դպրո-
ցին հայրը — որուն անսպասելի մահը
գուժեցին այս շաբթուան հեռագիր-
ները — քաղաքակիրթ ոչխարհը ցնցող
իր հիւթեղ ու յեղափոխիչ երկերուն
մէջէն, որոնք ակենքն ալ մարդկային
ընկերութեան ախտերն ու վէրքերը
կը մերկայընեն, ունի շարք մը չորս
երկերու, «Զորս Անեսարանի» անունով
— որոնց երեք հատորները, Արգասա-
ւորութիւն, Աշխատութիւն, Ճշմարտ-
թիւն, լոյս տեսած են, իսկ չորրորդը,
Արդարութիւն, գեռ չ'է աւարտած —

Այդ քառեակ Աւետարաններով

կ'ուղէ ներկայ դարուն քրիստոնէական մտասիրպարին կամ կեանքի հաւատքին հանդանակը կտակել արդի տառապող մարդկութեան: Մեծանուն վարպետը, որ դարուն մեծագոյն իմաստասէրներէն մին յայտնուեցաւ Ստտանայի կըզզիին բանտարկեալին դատին մէջ Ֆրանսայի Արդարութեան երեսին նեաած «Կ'անբասսանեն» ներովը, իր «Չորս Աւեստրանի» ի «Ճշմարտութիւն» հաստրին մէջ, ուսուցման ու գաստիրակութեան նուիրուած, հետեւեալ շախախիչ վճիռները կ'արձակէ. «Չարգացած ժողովուրդ մը միայն ընդունակ է արդարութեան. ժողովուրդ մը, որ բան մը չը գիտեր, որ կը բնանայ դարաւոր սգիտութեան մէջ, որ դրօսակի ու հայրենասիրութեան մեծ բառերէն կը մոզուի. դիւրաւ կ'ըլլայ որսը մալուրանքին ու սուտին: Նախ քան ամեն յառաջդիմութիւն, պէտք է խնդիրը ձեռն առնել սկիզբէն. պէտք է կրթել ամբոյսը, մաքառել կրնալու համար աղջամուղջներուն դէմ ուր անցեալին յեսադիմակաւ ուժերը զանի կը բռնեն. որպէս զի վաղուան Ֆրանսան բանավարող ըլլայ, արդարակորով ու ազատարար ազգը, որ իր ամբողջ ուժը պիտի քաղէ ձեմարտութեան նանաչումէն»:

Նոյնը կրնանք ըսել Հայութեան համար. արժանի չ'ենք ազատութեան և ո՛չ ալ ատակ՝ արդարութեան, ցորչափ չ'ենք կրեք մեր մէջ զարգացած անդամներու մեծամասնութիւն մը:

Քաջալերե՛նք ուրեմն «Տիգրան Երկաթ Ժողովրդային Միութիւն»ը, ընկերակցի՛նք, բաժանորդագրուի՛նք անոր ու մեր լուման ձգե՛նք գանձանակին մէջ այդ ազգօգուտ հաստատութեան, որ սահմանուած է վերանորոգելու և փրկելու Աղբքսանգրիոյ ինկած հասարակութիւնը:

Ք Ր Ո Ն Ի Կ

Տիպիկ Տիրոհի Բ. ԳԱՐԱՅԵԱՆ

ՄՆԵՍԼ ԲՍ.ԲՍ.ՉԵԱՆ

Աղեքսանդրիոյ հասարակութիւնը Սեպտ. 27ին դառն կորուստ մ'ունեցաւ յանձին Տիպիկ Տիրոհի Բէդրի Գարայեանի, որ երիտասարդ հասակին մէջ մեռաւ քողով անմիտքաւ ամուսին մ'ու մէկ հասիկ անչափահաս որդի մը: Վսեմ. Աբրահամ Բարթող Պէյի մասնաւոր խնամովը Ս. Պողոս Պետրոս Եկեղեցին լուսավառուած էր պատշաճօրէն. յուղարկաւորներու ընտելեալ բազմութիւն մը հետզհետէ կը խոնէր Եկեղեցին ու օրջախակը. Աբրահամ Պէյ Բարթող, Հայկ Էփրզէ, Յ. Շնորհիեան, Լ. Աժեհեան, Յ. Պաղտատեան, Կ. Տէրվիբեան, Գ. Չպոյնեան, Պ. Օհանեան, Մ. Տամասեան, Եւն, Եւն: Թափօրապետն էր Գեռ. Հ. Բարթող Վ. Թագանեան Ֆոնուզցին, օրջապատուած՝ Եկեղեցական դասէն:

Յուղարկաւորներուն մէջ աչփի կը զարնէին Երուպացիներէն Պ. Գամէլիէրի, Մայերի եւ Շրայնի սնորհներն ու պատշոնեաներէն ոմանք, Եւն, ողբացեալ սիկնոջ ամուսինը Տիար Բէդրի Գարայեան Շրայնի վանառասան կարեւոր պատշոնեաներէն ըլլալով:

Գարայեան ու Բարազեան գերդաստանք իրենց պարադաներով շնորհակալութիւննին կը յայտնեն հրապարակաւ ամեն բարեկամներուն ու ծառայողներուն, որոնք ներկայ զսնուեցան յուղարկաւորութեան հանդիսին:

Մեր խորին ցաւակցութիւնները կը յայտնենք Տիար Բէդրի Գարայեանի, որդիին ու Բարազեան գերդաստանին այս դառն կորուստին համար:

— ԳԱՂՏՆԻ ՈՍՏԻԿԱՆՈՒԹԵԱՆ
 պետը՝ Հաճի Մէհմէտ էֆ. իր լրտես-
 ներէ մէկէն իմանալով որ Ալբանիա-
 ցիք ալ այս միջոցիս լաւ տրամադրու-
 ած չեն դէպի Ս.պտ-իւլ-Համիդ, այս
 լուրն անմիջապէս հաղորդեց Սուլդա-
 նին:

Սուլդանն որ արդէն անել գրու-
 թեան մը մէջ կը գտնուի Մակեդո-
 նական խնդրով, որոշած է Ալբանիաց-
 ւոց դրուժիւնը բարւոքել (!): ասոր
 համար հրամայեց անմիջապէս տեղա-
 փոխել Ալվասանի կառավարիչը. պատ-
 ուէր զրկուեցաւ նաև հարկահաննե-
 րուն յետ այսու աւելի քաղաքավա-
 րութեամբ (՝.՝) վարուիլ Ալբանիա-
 ցիներու հետ, դադրեցնել ամենայն
 խստութիւն. . . մէկ խօսքով, առաջժժ
 Ալբանիացւոց խաբրին չի դպչել:
 Կրտուի թէ այս սրոշումները հաղոր-
 դուելով Ալբանական ժողովուրդնե-
 րուն, անոնց վատ տրամադրութիւնը
 փոխուեր է և նուազեր անոնց զայ-
 րոյթը:

Սուլդանն իրատէով մը արձա-
 կեց 40,000 պահեստի զօրքեր, որոնք
 դրօշի տակ կանչուած էին Մակեդո-
 նական կոմիդէի բուլղար խմբերը ջըն-
 ջելու համար: Ս.պտ-իւլ-Համիդ այս
 կարգադրութիւնն ըրաւ երբ պաշտօ-
 նապէս բուլղար կառավարութեան
 կողմէն իրեն հաղորդուեցաւ և ապա-
 հովցուեցաւ թէ իրօք Ֆէրոինանտ իշ-
 խանը յետ այսու ամէն ջանք պիտի
 ընէ Մակեդոնական շարժումը չեզո-
 քացնելու և ամէն պարագայի մէջ
 պիտի ընդդիմանայ Մակեդոնիոյ մէջ
 կատարուած ոև է ապստամբութեան:

— ՏԱՄԱՏ ՄԱՀՄՈՒՏ ՓԱՇԱՅԻ ազ-
 գականներէն մին (քրոջը որդին) ան-
 հետացաւ շնորհիւ լրտեսներու: Այդ
 երիտասարդը՝ Հաճի Սատի էֆէնտի՝
 ամբաստանուած է, իբր թէ վտանգա-
 ւոր թղթեր և նամակներ ունի եղբր
 իր քովը:

— ՅՈՒՆԱՍՏԱՆ. Մի քանի օր առաջ
 Աթէնքի կառավարութեան հաղորդը-
 ւեցաւ թէ Լաուրիումի հանքային ըն-
 կերութեան կեդրոնաւեղիէն անտա-
 նելի և բոլորովին անբացատրելի հոտ
 մը կուգար. ժողովուրդի մէջ զանազան
 զրոյցներ շրջիլ սկսան. իրարանցում,
 խուզարկութիւն, ևն. ի վերջոյ նոյն
 հաստատութեանց տախտակամածները
 քակելով, 600 սատկած մուկերու բա-
 նակ մը գտնուեցաւ. նախ կարծուե-
 ցաւ թէ ժանտախտէ սատկած էին.
 բայց յետոյ, կառավարական բժիշկին
 քննութենէն հաստատուեցաւ թէ թու-
 նաւորուած էին:

— ՄԱԿԵԴՈՆԱԿԱՆ ԽՆԴԻՐԸ. Մա-
 նասթրի Վիթոլիա քաղաքին յունա-
 կան հիւպատոսարանին մէջ երկու օր
 առաջ մեծ կռիւ ու արիւնահեղութիւն
 եղաւ, ահա թէ ինչպէս. — Մակեդո-
 նական կոմիդէին պատկանող բուլղար-
 ներ յունաց հիւպատոսարանը մտնելով
 հայհոյած և անարգած են յունաց դը-
 րօշակը: Հիւպատոսարանին պաշտօն-
 եայ յոյները փորձած են արտաքսել
 այդ յանդուգն ինքնակոչները, բայց
 վերջիններս կը դիմադրեն և նոյնիսկ
 յարձակողական դիմք մը կը բռնեն,
 ուսկից կը ծագի ահագին կռիւ մը ո-
 րուն մէջ երեք բուլղարներ և մի յոյն
 կը սպաննուին: Ձինեալ ուժի մը մի-
 ջախտութիւնը պէտք եղաւ և կռիւը
 վերջացաւ մի քանի բուլղարներու
 ձերբակալութեամբ:

Սօֆիական պաշտօնապէս ծանուց-
 ուեցաւ Յունաստանի արտաքին գործոց
 մինիստրին, Մակեդոնական կոմիդէին
 բուլղար կառավարութեան կողմէն
 լուծման լուրը: Մանուցուեցաւ նոյն-
 պէս զօրավար Թոնչէֆի և Միքայի-
 լովսքիի ձերբակալութեան լուրը: Սե-
 լանիկէն մեզ կ'իմացնեն թէ Մակե-
 դոնական կոմիդէի նախկին պետը՝ Սա-
 րաֆօֆ, Վիեննա ապաստաներ է, ուր
 պիտի կազմէ եղբրնոր ծրագիր մը իր

ապագայ գործունէութեան համար: Կ'ըսուի թէ Սարաֆօֆ ահագին խումբ մը պիտի պատրաստէ, և անոնց գլուխըն անցած պիտի մտնէ Մակեդոնիա: Սօֆիալի զինուորացան չըլաններուն մէջ մեծ յուզում մը կը տիրէ, Մակեդոնական կոմիդէի դէմ բուլղար կառավարութեան բռնած ընթացքին պատճառով: Կը հաւաստեն թէ գժգոհութիւնները թեթեցնելու համար մտտորերս զինուորականներէն մէկ քանիին աստիճանները պիտի բարձրացունին և կարգ մը սպաներու համար ալ տեղափոխութիւն տեղի պիտի ունենայ:

— ԹՐԲՍԿԱՆ ԳՈՐԾԵՐ. Ամեն օր Սուլթանի կենաց դէմ նոր դաւադրութիւններ երևան կ'ելլեն (".), ասոր համար երկտղի պահպան զօրքերուն թիւը կրկնապատկուեցաւ, եւ Կ. Պոլսոյ գաղտնի ոստիկանութեան և լրտեսներուն թիւը բազմացաւ, (քիչ ատենէն ամբողջ Կ. Պոլսոյ բնակիչները կա'մ գաղտնի ոստիկան և կա'մ լրտես պիտի դառնան...):

Մամուլը սաստիկ հսկողութեան տակ է, գրաքննութիւնը բացարձակապէս կ'արգիլէ Սուլթանի մասին ու եւ է բան գրել: Իբր երիտասարդ թուրք ձերբակալուած մի քանի երիտասարդներ՝ որոնք իբր թէ Սուլթանի կենաց դէմ դաւադրած են եղեր, Վոսփորի ձկներուն կեր դարձան: Բոլոր այս բաներուն համար մտքերը շատ գրգռուած են թուրքիոյ մէջ, կը վախցուի թէ ՆՈՐ ԶԱՐԴԵՐ տեղի ունենան Կ. Պոլսոյ մէջ... իբր հետեանք այս անտանելի դրութեան:

Արդէն բոլոր պետութիւններու գեսպանները ծանուցագրերով իրենց մէն մի կառավարութեան յայտնեցին թուրքիոյ սարսափելի դրութիւնը և փոխադարձ հրահանգներ ստացան իրենց հպատակներու պաշտպանութեան համար:

— ԳԱՀԱԿԱԼՈՒԹԵԱՆ տօներուն

առթիւ ցանկ մը ներկայացուեցաւ Սուլթանին բուլղար բանտարկեալներու — որոնք Մակեդոնիոյ զանազան բանտերուն մէջ կը գտնուին — ներման համար: Բայց հազիւ թէ Բ. Իրան առաջին քարտուղար Ալի Եսուսֆէֆէնտի երկու բառ ըսած էր, Սուլթանն անմիջապէս անոր ձայնը կտրեց և պատուիրեց որ այդ բուլղար ապրտամբներու դատն անմիջապէս տեսնուի և այնպիսի խիստ պատիժներ տրուին անոնց որ ուրիշներուն իբր դաս ծառայեն:

— ՊԱԼԱՏԻՆ մէջ շինուած հաշիւէ մը կը տեսնուի թէ Գահակալութեան տարեդարձի տօներուն առթիւ մտաւորապէս երկու միլիոն օսմ. լիրա այտինքն քառասուն և հինգ միլիոն ֆրանկ ծախսուած է լուսավառութեանց հրախաղութեանց և նուագածութեանց համար !!!:

— ՍԵՆԵԿԱՊԵՏ ՀԱՃԻ ԱԼԻ ՊԷՅ, առաջին քարտուղար՝ Թահսիս պէյ և երկրորդ գիւանապետ Իզզէթ պէյ վեզիրութեան բարձրացան: Այս երեք անձաւորութեանց ազդեցութիւնը շատ մեծ է պալատին մէջ. անոնք որ այս երեքէն մէկուն հետ լաւ յարաբերութեան մէջ էին, կրնային ամենայն ինչ յուսալ. ամէն շնորհք, ամեն հրաման, շքանշան, տիտղոս ասոնց ձեռքով կը տրուէր:

Սակայն հակառակ այս երեք անձերու ունեցած ահագին վարկին, ոչ ոք չէր մտածեր թէ երեքը միասին վեզիրութեան պատուին պիտի արժանան: Մանաւանդ որ այս երեքը միշտ իրարու հակառակորդ կամ աւելի ճիշտը, իրարու նախանձորդներ եղեր են: Սուլթանը չէր կրնար մէկը բարձրացնել առանց միւս երկուքին նախանձին տեղի տալու, ուստի երեքը մէկէն փաշայութեան աստիճանին բարձրացուց: Պէտք է խոստովանիլ նաև որ փատիշահը չափէն աւելի կը վախնայ

այս երեք անձերէն, որովհետեւ, այսպէս ասած, իր կեանքն անոնց ձեռքին մէջն է, ուստի շատ մեծ խոհեմութեամբ մը Սուլդան Համիդ երեքը միասին գոհացուց, այսպէսով անգամ մը ևս անոնց բարեկամութիւնն և հաւատարմութիւնը շահեցաւ: Այդ երեք փաշաները Սուլթանի սենեկին նորատեսակ կերբերոսներն էին, այսուհետեւ անոնք առաւել քան երբէք խիստ պիտի լինին բնականաբար: **ԷՍԹՈՒԷՍԹ**

— **ՄԱՆԱՍԹՈՐԻ** նահանգին մէջ տեղի ունեցող կատաղի կռիւին մէջ Պուլկարները ձգած են 52 մեռեալ ու 112 վիրաւորներ, ինչպէս որ կը հաստատեն պաշտօնական տեղեկագիրները:

— **ՊՈՒԼԿԱՐԻԱՆ ՈՒ ՌՈՒՍԻԱՆ**. Փէրտինանտ իշխանն ու Յարին ներկայացուցիչ Նիգօլա Մեծ-Դուքսը Շիպքա հասան, ներկայ գտնուելու համար Պուլկարիոյ անկախութեան 25րդ Տարեդարձի հանդիսին ու օժման արարողութեանը ուսադաւան հարուստ եկեղեցիի մը, որ կառուցուած է կիրճին պաշտպանութեանը յիշատակին: Այս առթիւ զօրագնդերը մեծ շարժման մէջ գրուեցան: Ալևոր Իկնաթիէֆ կոմսը, 11 ուս զօրապետներ ու Շիպքա պատերազմիսը բոլոր ուսական բանակներուն պատգամաւորութիւնները ներկայ եղան ու Պուլկարներուն շեռ եղբայրակցութիւն կնքեցին: Պուլկար դնդերն աչքէ անցընելով՝ Նիգօլա Մեծ Դուքսը յայտարարեց թէ՛ ո՛ր եւ է տարբերութիւն չը տեսաւ ասոնց ու ուսական գնդերուն միջև:

— **ԼԻԲԱՆԱՆԻ** կուսակալը վերջապէս որոշուեցաւ, Մուզաֆֆէր բաշան, որուն անուանումը վաւերացուցին Մեծ Տէրութիւնները:

— **ՀԱԿԱՍԵՄԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ** Ռուսմանիոյ մէջ վերջերս այնքան սուր կերպարան մ'առաւ, որ Միայ. Նահանգաց կառավարութիւնը խստիւ բողոքեց այդ հակահրէական շարժման դէմ

և Տէրութիւնները հրաւիրեց հաւաքական դիմում մ'ընել Ռուսմանիոյ կառավարութեան քով, վերջ մը զնելու համար այդ անիրաւ հալածանքին: Վաշինկթընէն 28 Սեպտ. հեռագիր մը կը ծանուցանէ թէ՛ Ռուսմանիան դադրեցուց հրէաներուն դաղթելը, հետեւաբար Միաց. Նահանգներուն կառավարութիւնն առ այժմ ետ առած է իր բողոքը:

— **ՏԱՐՏԱՆԷԼԻ ԱՆՅՔԸ**. Ռուսական 4 թօրփիլակիրներուն Տարտանէլէն անցքն արտօնող իրատէն վերջապէս հրատարակուեցաւ, պայմանով որ այդ թօրփիլակիրները ռազմամթերք երբէք չը կրեն, առեւտրականներու գրոշակը պարզեն ու առնուազն 24 ժամը մէկ անցնին անոնք մէկիկ մէկիկ: Սուլթանը Սեպտ. 22ին քովը կանչելով Պ. Չինովիէֆը, հազորդեց իրեն այս որոշումը:

— **ԼԷՆՏԸՐ ՊԱՆԲ** դրամատան արկղակալը ձէլիսէք որ զանազան չէքէր ու թղթեր խարդախելով իւրացուցած էր 4 միլիոն 600 հազար դուրօնա. ինքնասպան եղած է: Դանուբի մէջէն հանեցին իւր դիակը, ինչպէս նաև իր անունը կրող թղթեր ու նամակներ:

— **ՍԻԿԻԼԻՈՅ ԱՂԷՏՔԸ**. Մօտիգայի գոհերուն — փոթորկէն ու ոլոզումներէն — թիւը կը հասնի 300ի: Դիակները կը մնան եկեղեցին, որովհետեւ գերեզմանատունք քանդուած են ու թաղել կարելի չէ: Շատ մը դիակներ ալ քչուած տարուած են ծովը, որ զանոնք հիմայ սկսեր է ծովեզերքները գուրօ նետել:

— **ՄԱՐԹԻՆԻՔԻ** հրաբուխները դադրած կը թուին թէև, հիւսիսային մասը վտանգաւոր կը նկատուի. այդ կողմի բնակիչները պիտի փոխադրուին ու բաշխուին կղզիին մնացեալ մասին մէջիսկ բազմաթիւ ընտանիքներ ալ կը խորհուի հաստատել Կուատալուբ ու Կիւլանա:

— ԷՄԻԼ ԶՕԼԱՆ մեռած գտան իր բնակարանին մէջ. Չերմոցի մը կաղէն շնչահեղձ եղած է. Տիկին Զօլայի վիճակն ալ բուսական ծանր էր, բայց վտանգը անցուցած է կ'ըսուի: Էիլ Զօլա, ծագումով Իտալացի, ծնած է Բարիզ 1840ին ու կը մեռնէ 62 տարեկան:

— Ն. Բ. ԽՏԻՎԸ կ'սպասուի ամսոյս 4ին Աղեքսանդրիա:

— ՕՍՄ. ՊԱՀԵՍԻ շորքերէն 38 վաշտեր նորէն կանչուեցան, ասոնցմէ 12 վաշտը պիտի զրկուի Իւսքիւպ: Այս վաշտերով Իոււր պիտի փորձէ խեղդել սպասամբութիւնը, որ բռնկած է բովանդակ Մակեդոնիոյ մէջ, ուր բոլոր պուլկար գիւղերը կը յարձակին թուրք գիւղերուն վրայ: Մօտալուս կը կարծուի ընդհ. ապստամբութեան մը պայթումը. որուն համար գօմիթէին պետը Սարաֆօֆ գերմաշղկային ճիգեր կը Թափէ: Լուր կայ թէ ահագին բանակ մը կազմակերպելու ջանքեր կ'ընէ արի յեղափոխ պետը, յանկարծ խուճելու համար Մակեդոնիա: Ուշի խուճի մըն ալ կազմած է Սարաֆօֆ, Ապտ-Իւլ-Համիզը սպաննելու նպատակով:

— ՄԱԿԵԴՈՆԻԱՆ ԱՊՍԱՄԲՍԾ. Մակեդոնական գօմիթէն, 30 Սեպտ. թուով Սօֆիայէն հասած հեռագրի մը համեմատ, բաց է ի բաց կը ծանուցանէ թէ Մակեդոնիոյ մէջ պայթած վերջին ապստամբութիւնը վարսոյն է Եանգօֆ գնդապետը, որ ասեցնօք ծառայած է Պուլկար դրօշներուն տակ: Իր ձեռքին տակ ունի 3000 զինուած մարդիկ, շատ մը խմբերու բաժնուած: Առժամեայ կառավարութիւն մը կազմուեցաւ:

— ՄԻԹՐՈՎԻՉՍԻ մէջ (Հին Սերպիա) ուսական հիւպատոս մը հաստատել ուղեւորով ուս կառավարութիւնը հիւպատոս նշանակած էր Պ. Շէրպէնը, Իոււր հակառակած էր առարկելով թէ Ալբանացիք ու էջ աչքով պիտի նա-

յին իրենց քաղքին մէջ ուս հիւպատոսի մը ներկայութեանը, սակայն Ռուսիան մտիկ չ'ըրաւ. իր պահակն ու ծառան Սեպտ. 1ին հասան Միթրովիճա ու պառկեցան կարսւանսէրային մէջ: Բայց, Իրան գուշակութեանը համաձայն, Սեպտ. 2ին Իսա Բօլեէտինաքձ Ալբան պետը շուտով քաղաք իջաւ, երեւելիները գումարեց, որոնք որոշեցին վճնտել պահակն ու ծառան, ու սպաննել հիւպատոսը, նաւամատոյցը ոտք գրած պահուն: Հանրային մունետիկ մ'ելաւ, որոշումները բարձր ձայնով յայտարարեց ու աւելցուց որ եթէ մէկը ուս հիւպատոսին ու ծառաներուն օգնէր, պիտի սպաննուէր ու տունը քանդուէր: Պահակն ու ծառան հետևեալ օր հսկողութեան տակ դուրս հանուեցան քաղքէն ու Իւսքիւպ տարուեցան իրենց գոյքերով: Բայց, քանի մ'օր յետոյ, Իոււր տըլաւ հիւպատոսին արտօնագիրը, խոստանալով Միթրովիճայէ դուրս հանել Իսա Բօլեէտինաքձը. իսկ հիւպատոսին հաստատուիլը կը մնայ խնդիր ու շատ կարելի է որ Պալատին գաղտնի հրահանգները բոլորովին հակասեն յայտնի հրահանգներուն:

— ՀԱՄԻՏՅԱՆ կառավարութեան սուտ ու փուտ ու անպաշտօն զեկոյցները կը հրատարակուին երբեմն եւրօպական մեծ ու պզտիկ թերթերուն մէջ, Կ. Պոլսէն քղրակցութիւն կամ ֆենոթիւնի ձեւին տակ, Այս վարձկան թերթերէն են Վիեննական Նիու Ֆրէյե Բրեսն ու Պրիւսէլի Էնսէրանսան Պեղը, որոնք Մակեդոնիոյ վրայ ֆենոթիւն տիտղոսով շարք մը յօդուածներ հրատարակեցին վերջերս, ամենն ալ միեւնոյն աղբիւրէն, երկտըզէն քաղուած, Սուլթանին հասարակ դպիրներուն ձեռքովը պատրաստուած:

Բօսք, Ռըվիս s'Օռիան, Ռիւմանիսիեր Լյոյս, Օգոստ. 5, 9, 10, 14

Թուականները Նոյնիմաստ յօդուածներ հրատարակեցին զառ զառ, Պրիւսէի հայասիրական գօնկրէին դէմ, Վ. Պոլսէն քղրակցութիւններ խորագրով: Նոյն յօդուածը բառ առ բառ, Օգոստ. 18ին հրատարակեց Սթօքհօլմի Սվենսոֆա Տակպրասթս Թերթը, որուն մէջէն հետեւեալ նշանակալից սողերն արտագրած է շէջօրօքէն.

«Մեր քաղցիկն թուրք դեսպանատունը մեզի յանձնեց հետեւեալ քարգմանութիւնը, թուրք կառավարութեան կողմէն ուղղեալ շրջաբերականի մը, Պրիւսէի հայասիրական վերջին Գօնկրէին աւիրովը: Կ'արտագրենք զայն առանց ուր է մեկնաբանութեան:

Յետոյ կուգայ յօդուածը, ծայրէ ծայր զըպարտութիւն ու ստաբանութիւն:

Ահաւասիկ քաղաքակիրթ եւրոպայի Մամուլին կեղտերը, որոնք մարդախոշոշ հրէշի մը ոճիւրները շատագովելու երես ունին, շնորհիւ կաշառքին...

ՇԱԲԱԹ. ՎԻՃԱԿԱՑՈՅՑ ՀԱՄԱՃԱՐԱԿԻՆ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵԿԻՊՏՈՍ

	Բանուած	Մեռած	Բժշկուած
Սեպտ. 1	3875	2890	301
» 8	7758	6662	659
» 15	9466	7278	1110
» 22	6388	5808	1415
» 29	4022	3593	961

ԱՂԵՔՍԱՆԴՐԻՍ

Սեպտ. 28	25	16
» 29	29	21
» 30	15	10
Հոկտ. 1	18	9



Երիտասարդ մը, որ քաջ Անգլիագէտ է, պատրաստ է մասնաւոր դասեր տալ անգլերէնի, տուներու մէջ ալ, խիստ զսնացուցիչ եւ դիւրամտօչելի պայմաններով:

Փափագողները դիմեն Փիւնիկի խմբագրութեան:

SALAMANDER

ՍԱԼԱՄԱՆՏԸՐ

Ապահովագրական Ընկերութիւն ընդդէմ հրդեհի.

ԱՄՍԹԵՐՏԱՍ

Դրամագլուխ 3,125,000 ֆրանկ

Ամեն կերպ Ապահովագրութիւնք կ'ընդունուին ընդդէմ հրդեհի ինչպէս նաև Մովային, Գետային և Յամաքային փոխադրութեանց արկածներու դէմ.

Դիւրամտօչելի գներ և պայմաններ

Դիւնը առ Ընդհանուր Գործակալ եւ Լիսգօր-Փոխանորդ

ՄԻՂՐԱՆ ԴԱԼՅԱՆՍ

Աղեփասնորիս, պզտիկ Մեկշիէ Ապրասարսա փողոց թիւ 10